

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ \_\_\_\_\_  
«Ալմաստ» բաց բաժնետիրական ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի

Երկու հազար տասնյոթ թվականի օգոստոսի 15-ին ժամը 15:00-ին, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ռուբինյանց 28 հասցեում տեղի ունեցավ «Ալմաստ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ «Ընկերություն») բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը (այսուհետ «Ժողով»):

Ժողովին մասնակցում էր Ընկերության թվով 418 217 (չորս հարյուր տասնութ հազար երկու հարյուր տասնյոթ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատերերից թվով 373 024 (երեք հարյուր յոթանասուներեք հազար քսանչորս) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի (Ընկերության կանոնադրական կապիտալի 89,193887 %) սեփականատեր՝ «ԷԼԻՏ-ՆՆ ՖԻՆԱՆՍ ՔԱՍՓՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս Ընկերության կառավարող կազմակերպություն՝ «ԱՐԻՆՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, որի անունից հանդես է գալիս տնօրեն Կարեն Սաֆարյանը:

Ապահովված էր Ժողովի անցկացման համար անհրաժեշտ քվորումը (89,193887 %):

Ժողովին մասնակցում էր ընկերության խորհրդի նախագահ Գոհար Քալանթարյանը, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վանիկ Հովսեփյանը:

Ժողովը նախագահում էր խորհրդի նախագահ Գոհար Քալանթարյանը՝ Դոնարա Սահամյանի քարտուխարությամբ:

**Օր ա կ ա ր գ**

1. «Ալմաստ» ԲԲԸ տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և գործադիր մարմնի իրավասությունները կառավարող կազմակերպությանը՝ «Արինս Գրուպ» ՍՊԸ-ին փոխանցումը,

2. ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեում գտնվող անշարժ գույքի գրավադրում:

**ԼՍԵՑԻՆ – հարց 1՝**

Առաջին հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Կարեն Սաֆարյանը, ով առաջարկեց 2017 թվականի սեպտեմբերի 1-ից Ընկերության գործադիր մարմնի իրավասությունները փոխանցել կառավարող կազմակերպությանը՝ «Արինս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ինչի կապակցությամբ նաև վաղաժամկետ դադարեցնել Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վանիկ Հովսեփյանի լիազորությունները:

Ժողովի նախագահ Գոհար Քալանթարյանն առաջարկեց Ընկերության անունից լիազորել Ռուդիկ Մկրտումյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AP0488636, տրված 26.07.2016 թվականին 046-ի կողմից, հաշվառված. Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, ՆԱՏԻ 1 փողոց, շենք 8, բնակարան 2 հասցեում) «Արինս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ համաձայնեցնել և կնքել գործադիր մարմնի իրավասությունների փոխանցման մասին պայմանագիր:

Հարցի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որից հետո հարցը դրվեց քվեարկության: Արդյունքում ձայները բաշղվեցին հետևյալ կերպ.

Կողմ - 373 024 ձայն      Դեմ - 0 ձայն      Ձեռնպահ - 0 ձայն

